



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԻՐ ՊԱՏԳԱՍԸ ՓՈԽԱՆՑԵՑ  
 Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ ՓԱՌԱՏՕՆԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**

Յուլիսի առաջին շաբաթավերջին տեղի ունեցավ Հ.Մ.Ը.Մ.-ի Նաւասարդեան 31-րդ մարզախաղերու փակման հանդիսութիւնն ու փառատօնը, Վէն Նայսի Birmingham մարզադաշտին վրայ:

Նաւասարդեան մարզախաղերու յաղթանակի պարահանդէսը տեղի ունեցավ Շաբաթ, Յուլիս 1-ի երեկոյեան, Universal Hilton պանդոկի մէջ:

Այս տարուան Նաւասարդեան Մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը ստանձնած էին Տէր եւ Տիկին Յովսէփ եւ Էլիզապէթ Պոյաճեանները:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ներկայ եղաւ ձեռնարկին եւ փոխանցեց իր օրհնութիւններն ու բարեմաղթութիւնները:

Երեքշաբթի, Յուլիս 4-ին, Սիացեալ Նահանգներու Անկախութեան տօնին օրը, տեղի ունեցավ 31-րդ մարզախաղերուն փակման փառաշուք հանդիսութիւնը, նոյն մարզադաշտին մէջ:

Այս առթիւ, Առաջնորդ Սրբազան հայրը փոխանցեց փակման հանդիսութեան իր պատգամն ու օրհնութիւնները:

Նշենք, որ Առաջնորդ Սրբազանը այցելութիւններ տուաւ կրպակները, որոնց շարքին էր մեր եկեղեցիներու Երիտասարդական միութիւններուն կրպակը, ու գնահատանքով արտայայտուեցաւ տարուող աշխատանքին մասին:

**PRELATE PARTICIPATES IN THE H.M.E.M. NAVASARTIAN GAMES CLOSING CEREMONIES**

Over the past weekend, the H.M.E.M. Navasartian Games closing ceremony and festival took place at Birmingham High School in Van Nuys.

The Navasartian Ball took place on Saturday July 1, at the Universal Hilton Hotel. The honorary presidents of this year's games were Mr. and Mrs. Hovsep and Elizabeth Boyadjian.

His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, attended the Ball and conveyed his blessings and best wishes.

The traditional parade of the closing ceremonies took place on Tuesday July 4<sup>th</sup>. On this occasion, the Prelate delivered his closing remarks and blessings.

During the festivities the Prelate visited the booths, including that of the Prelacy youth groups, where he commended the mission carried out by the organization.

## ՀՈԳԵՒՈՐ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ

Չորեքշաբթի, Յուլիս 5-ին, Ազգ. Առաջնորդարանի առժամեայ դահլիճին մեջ տեղի ունեցավ Կրօնական Ժողով: Յատուկ հրավերով ժողովին մեկ մասին մասնակցեցավ Քալիֆորնիա Նահանգի բանտերը այցելող եւ հայ բանտարկեալներու հոգեւոր սպասարկութիւն եւ մխիթարութիւն ընծայող Րաֆֆի Սրկ. Կարապետեան, եւ հովիւներուն գեկուցեց իր կատարած հոգեւոր աշխատանքներու մասին:

Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեանի հետ միասին, Տիր. Րաֆֆի Կարապետեան քրեական յանցանքներով կամ թմրանիւթի գործածութեամբ դատապարտուած բանտարկեալներու կ'այցելեն կանոնաւորաբար:

Տիր. Րաֆֆի, դատաւորի յատուկ արտօնութեամբ, պայմանական ազատութիւն վայելող եւ ուղղութեան գալու պայմանաւ յատուկ դաստիարակչական ծրագրի հետեւողներու կ'այցելէ շաբաթական դրութեամբ, յատուկ կեդրոնի մը մէջ, ուր Աստուածաշունչի սերտողութեան դասընթացքներու հետեւելով թմրանիւթի գործածութեամբ մոլորեալներ, Աստուծոյ շնորհքով իրենց կեանքը փոխելու, իրենց մոլութիւններէն հրաժարելու եւ բնականոն կեանքի վերադառնալու առիթը կ'ունենան:

Ազգ. Առաջնորդարանին կողմէ Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան այս հաւաքներուն բերած է իր մասնակցութիւնը:

Որպէս կենդանի վկայութիւն, Տիր. Րաֆֆի Կարապետեան հովիւներուն ներկայացուց թմրանիւթի գործածութեամբ բանտարկուած եւ յատուկ հսկողութեան պայմանները ամբողջացուցած երկու հայ երիտասարդներ, յեշեցնելով որ նման մոլորեալներու թիւը կը հասնի հազարաւորներու: Անոնք իրենց անձնական փորձառութեամբ վկայեցին թէ ինչ պայմաններու տակ մոլի դարձած էին թմրանիւթի գործածութեան եւ թէ ինչ հոգեկան տագնապներէ անցած էին: Բայց զղջալով հոգեփոխութիւն ապրած էին, սրբագրած էին իրենց կենցաղը եւ վերադարձած բնականոն կեանքի:

Առաջնորդ Սրբազան հայրն ու հոգեւոր հայրերը մեծապէս գնահատեցին կատարուած հոգեշահ աշխատանքը եւ յաջողութիւն մաղթեցին անոնց: Նաեւ առ ի գնահատանք անոնց օրինակելի ծառայութիւններուն, Առաջնորդ Սրբազանը անոնց նուիրեց Նոր Կտակարանէն ու “Self Control – A Christian Perspective” գրքոյկէն օրինակներ:

## PRELACY RELIGIOUS COUNCIL MEETS WITH SENIOR ARMENIAN CHAPLAIN

The Prelacy Religious Council held its meeting on the afternoon of Wednesday July 5, at the temporary Prelacy office in Encino. By the special invitation of His Eminence Arch. Moushegh Mardirossian, Chaplain Raffi Garabedian was present at the meeting to report on his activities. Chaplain Garabedian, along with Rev. Ashod Kambourian of Holy Cross Cathedral, visits local prisons to offer spiritual guidance to those who have committed criminal or drug offenses.

Chaplain Garabedian also visits those out on parole on a weekly basis and offers them Bible study classes so that they will be prepared to return to society as productive citizens. Very Rev. Fr. Muron Aznikian has also participated and assisted in this department.

Chaplain Garabedian was accompanied by two young Armenians who were previously jailed for drug offenses. The men spoke of their spiritual struggles, their reform, and their return to society and to a normal life.

The Prelate and clergy members commended the young men for their reformation and offered them a copy of the New Testament and also of the book "Self Control – A Christian Perspective".

## **Ս. ՆԱՐԱՏԱԿԱՑ ԵՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ**

Կիրակի, Յունիս 4-ին, կ.ե. ժամը մեկէն սկսեալ, տեղի ունեցաւ Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի 2005-2006 տարեշրջանի ամավերջի հանդէսը, Ազգ. Ֆերահեան վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ՝ Առաջնորդ Սրբազան հօր:

Բացման աղօթքը կատարեց Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Թիւրք. Խաչատուրեան: Բացման խօսք արտասանեց Տիկին Չարուհի Թիւրքեան:

Կիրակնօրեայի աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին աղօթքներով, ոտանաւորներով, սաղմոսներ եւ ոսկեղէն համարներ արտասանելով: 3-րդ եւ 4-րդ կարգերու աշակերտները ներկայացուցին ազգային տօներ եւ աւանդութիւններ:

Կիրակնօրեայ վարժարանի տեսուչը՝ Տիկին Սեդա Թէչեճեան փոխանցեց իր գնահատանքի եւ քաջալերանքի խօսքերը:

Եկեղեցւոյ հոգաբարձութեան խօսքը արտասանեց Տիար Լեւոն Արապեան:

Կիրակնօրեայի Մաղթերգով եւ Պահպանիչով հանդէսը հասաւ իր աւարտին:

Կիրակի, Յունիս 25-ին, կ.ե. ժամը 4-ին, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան հօր, տեղի ունեցաւ Կլէստէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանին հանդէսը, Եկեղեցւոյ «Արմենակ Տեր Պետրոսեան» սրահին մէջ: Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ էր ձեռնարկին, իբրեւ Առաջնորդ Սրբազան հօր ներկայացուցիչը:

Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Վազգէն Թիւրք. Աթմաճեան արտասանելէ ետք Տերունական աղօթքը, բարի գալուստ մաղթեց բոլորին:

Կիրակնօրեայ վարժարանի աշակերտները խմբային երգեր երգեցին, դաշնակի ընկերակցութեամբ Տիկին Գայանէ Գալստեանի: Աշակերտները հրամցուցին փունջ մը արտասանութիւններ եւ մաղթերգներ, կատարեցին սաղմոսներու, ուղերձի ընթերցում եւ աղօթքներ: Ներկայացուեցան 2005-2006 տարեշրջանի Կիրակնօրեայ վարժարանի ձեռնարկները համակարգիչի ցուցանկարներով: Եկեղեցւոյ հոգաբարձութեան խօսքը փոխանցեց Տիկին Մերի Չաղացպանեան: Կատարուեցաւ վկայականներու բաշխում:

Հանդէսի աւարտին, Կիրակնօրեայ վարժարանի տեսուչ Պր. Յակոբ Չաղացպանեան բեմ հրաւիրեց Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանը, որ

շրջանաւարտներուն փոխանցեց Առաջնորդ Սրբազան հօր օրհնութիւններն ու շնորհաւորութիւնները:

Հանդեսը վերջ գտաւ Հայր Սուրբին աղօթքով:

## **PRELACY SUNDAY SCHOOL COMMENCEMENT CEREMONIES**

On Sunday, June 4, the Holy Martyrs Church Sunday School commencement ceremony took place at “Avedissian” Hall in Encino.

Rev. Razmig Khatchadourian conducted the opening prayer, and opening remarks were made by Mrs. Zarouhi Kilejian.

Sunday School students participated in the ceremony with recitations of prayers and poems.

Remarks were also made by Sunday School director Mrs. Seta Kechejian, who conveyed her praise and encouragement to the students. Holy Martyrs church Board of Trustees Chair Levon Arabian also delivered congratulatory remarks.

The ceremony concluded with the Sunday School anthem and “*Bahbanich*” prayer.

On Sunday, June 25, at 4:00 p.m., the St. Mary’s Church Sunday School commencement ceremony took place at the “Armenak Der Bedrossian” Hall in Glendale. Very Rev. Fr. Muron Aznikian was in attendance representing the Prelate.

Rev. Vazken Atmajian conducted the opening prayer, after which he delivered welcoming remarks. The students participated with songs, poems, and the recitation of prayers. A slideshow of the year’s activities were presented to the guests with a slideshow. Mrs. Mary Tchaghatspanian delivered remarks on behalf of the Board of Trustees, followed by the presenting of diplomas.

Sunday School director Mr. Hagop Tchaghatspanian then invited Very Rev. Fr. Muron Aznikian to convey the Prelate’s congratulations and blessings.

The ceremony closed with the “Bahbanich” prayer.

## **ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՔ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒԻՐԻՉ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ**

Թեմիս Կրօնական Դաստիարակութեան երիտասարդաց բաժանմունքը, իր վարիչ կազմով, պարբերական հանդիպումներ կ’ունենայ մեր եկեղեցիներու երիտասարդութեան հետ:

Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին Կիրակի, Յուլիս 9-ին, Ս. Պատարագի աւարտին, պիտի հիւրընկալէ այս յանձնախումբը: Խօսք պիտի առնէ Գերայ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան: Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Աւետիս Թեյ. Թորոսեան պիտի խօսի «Ի՞նչպէս կարելի է յաւիտենական կեանքը ժառանգել» նիւթին մասին: Այս առիթով, Տիար Շանթ Թենտիրեան անգլերէնով պիտի ներկայացնէ իր հեղինակած գիրքը՝ «Հազար ու մէկ գիշեր Իրաքի բանակին մէջ»:

Յայտնենք որ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Միւռն Օ. Վրդ. Ազնիկեան եւ այս առիթով պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութիւնն ու բարեմաղթութիւնը:

## **PRELACY RELIGIOUS EDUCATIONAL LECTURE SERIES AT ST. GREGORY CHURCH OF SAN FRANCISCO**

The fifth lecture of the Prelacy Spiritual Educational Lecture Series will take place at St. Gregory Church in San Francisco on Sunday, July 9<sup>th</sup>. The lecture is organized by the Central Board of the Prelacy ACYA.

On Sunday morning, Very Rev. Fr. Muron Aznikian will conduct Holy Mass at St. Gergory. At the lecture, following Holy Mass, Parish Priest Rev. Avedis Torossian will speak on the topic “How to Attain Everlasting Life”, and Mr. Shant Kendirian will present his book “One Thousand and One Nights in the Iraqi Army”. The event is open to faithful of all ages.

## **ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԻ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԶԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

Երեքշաբթի, 11 Յուլիսի կէսօրին, Իկըլ Ռաք շրջանի Ղըպտի Ուղղափառ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ Միջին Արեւելքի Ուղղափառ եկեղեցիներու Լոս Անճելըսի շրջանի Առաջնորդներու հերթական ժողովը, մասնակցութեամբ Թեմիս Առաջնորդ Սրբազան Զօր ու Ղըպտի, Ասորի եկեղեցիներու ու Էջմիածնական Թեմի Առաջնորդներուն: Ժողովը պիտի քննարկէ յառաջիկայ միատեղ ծրագիրներու կարելիութիւնները:

## **PRELATE TO PARTICIPATE IN THE MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX CHURCHES**

The regular meeting of the Council of Oriental Orthodox Churches will take place on Tuesday July 11, at St. Mary’s Coptic Church in Eagle Rock.

The Prelates of the Armenian Apostolic, Coptic, and Syriac Orthodox Churches will participate in the meeting, where the possibility of future joint endeavors will be discussed.

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀՕՍԻ ՊԱՏԳԱՄԱԲՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ

Հինգշաբթի, Յուլիս 13-ի կեսօրին, Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան հայրը ներկայ պիտի ըլլայ Հայ Օգնութեան Միութեան Շրջանային Վարչութեան 86-րդ Պատգամաւորական ժողովի բացման հանդիսութեան, պիտի կատարէ բացման աղօթքը եւ ուղղէ իր պատգամը:

Ժողովը տեղի պիտի ունենայ Ուիթիըր շրջանի Ռէտիսըն պանդոկին մէջ:

### PRELATE TO PARTICIPATE AT THE A.R.S. ANNUAL ASSEMBLY

On Thursday July 13, the Prelate will attend the opening of the 86<sup>th</sup> representative assembly of the Armenian Relief Society where he will conduct the opening prayer and deliver his remarks.

The assembly will take place at the Radisson Hotel in Whittier.

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՖՐԵՉՆՕ Կ'ԱՅՑԵԼԷ

Կիրակի, 16 Յուլիսին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի այցելէ Ֆրեզնօ եւ Ս. Պատարագ պիտի մատուցանէ Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագէն ետք, Եկեղեցւոյ հոգեւոր հովիւին ու հոգաբարձութեան կողմէ կազմակերպուած է ընդունելութիւն մը, որուն ընթացքին, հոգաբարձութիւնը կրթաթոշակներ պիտի տրամադրէ խումբ մը աշակերտներու եւ ուսանողներու, որոնք երկրորդական ու բարձրագոյն ուսման կը հետեւին ու ձեռք բերած են փայլուն արդիւնքներ: Եկեղեցին ունի յատուկ հիմնադրամ մը, եւ ամէն տարի այսպէսով կը քաջալերէ յաջողութիւն արձանագրող աշակերտները:

Իսկ երեկոյեան ժամը 6ին, նմանապէս հովիւին ու հոգաբարձութեան նախաձեռնութեամբ, կազմակերպուած է ընտանեկան ասանդակական ընթրիքի երեկոյ մը: Եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցող այս երեկոյթին, հովիւն ու հոգաբարձութիւնը պիտի պատուեն Կիրակնօրեայ վարժարանի անցեալի ու այժմու նուիրեալ ծառայողները, անոնք ըլլան տեսուչ թէ ուսուցիչ: Առաջնորդ Սրբազանը պիտի նախագահէ այս երեկոյթին ու պիտի փոխանցէ իր պատգամը:

### PRELATE TO CONDUCT HOLY MASS AND PARTICIPATE IN RECEPTIONS AT THE FRESNO PARISH

On Sunday July 16, the Prelate will be in Fresno where he will conduct Holy Mass at Holy Trinity Church.

Following Mass, a reception has been organized by the Pastor and Board of Trustees, during which the Board of Trustees will grant scholarships to a group of honor

roll students who are pursuing higher education. The Church has a special fund for this purpose and in this way encourages students each year.

At 6:00 p.m., the Pastor and Board of Trustees have also organized a family night, under the auspices of the Prelate. During the evening, which will take place at the church hall, the Pastor and Board of Trustees will honor past and present directors and teachers of the Sunday School.

## ՇՆՈՐՀԱՅԱՆԴԵՍ

Չորեքշաբթի, Յուլիս 19-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան հօր, եւ կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանի Յարաբերական յանձնախումբին, շնորհահանդես մը տեղի պիտի ունենայ բանաստեղծ, մտաւորական եւ եկեղեցւոյ հաւատարիմ ծառայ ժագ Ս. Յակոբեանի «Անմեղ Մեղապարտը՝ Պատարագ» հատորին:

Գիրքը կը ներկայացնէ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան: Զեռնարկը տեղի պիտի ունենայ Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ: Պիտի իրագործուի գեղարուեստական կոկիկ յայտագիր, եւ ձեռնարկի աւարտին տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն: Մուտքը ազատ է:

## PRELACY P.R. COMMITTEE PRESENTS NEW BOOK BY JACQUES HAGOPIAN

On Wednesday July 19, at 7:30 p.m., there will be a book presentation for the newly published book by Jacques Hagopian. The presentation is being held under the auspices of the Prelate and organized by the Western Prelacy Public Relations Committee. The event will take place at the "Armenak Der Bedrossian" Hall of St. Mary's Church in Glendale.

The book will be presented by Very Rev. Fr. Muron Aznikian, Co-director of the Prelate Christian Education Department. There will also be an artistic program and a reception. Admission is free and the general public is encouraged to attend.